

ԳՐԻԳՈՐ Գ ՓՈԲՐ ՎԿԱՅԱՍԵՐԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ՄԻ ԹՂԹԻ ՄԱՍԻՆ

ԱԶԱՏ ԲՈՋՈՑԱՆ

Թղթերը հայոց միջնադարյան պատմության արժեքավոր աղբյուրներից են և ուրույն տեղ ունեն հայ մատենագրության մեջ: Դրանք հոգևոր և պետական բարձրաստիճան պաշտոնյաների, նշանավոր մտավորականների թղթակցություններ են, փաստաթղթեր, որոնք հայ հասարակական մտքի և դիվանագիտության, քաղաքական և եկեղեցական պատմության ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն:

Թուղթ-ուղերձը մեր մատենագրության շատ տարածված, սակայն քիչ ուսումնասիրված գրատեսակներից է: Միջնադարյան նամակների մի մասն է միայն տպագրված, իսկ դրանց մասին համակողմանի հետազոտություններ մեզանում դեռևս չկան:

Թղթառաջների հրատարակությունը, ուղերձ լատենների ուսումնասիրությունը¹, թղթերի մատենագիտության ստեղծումը² կօգնեն մասնագետներին՝ թվագրել, մեկնաբանել այս կամ այն նամակը և պարզաբանել դրանց հետ առնչվող պատմա-մշակութային ու աղբյուրագիտական խնդիրները:

«Պատճառ խնդրոյ միաբանութեան թագաւորին Հոռոմոց Մանուէլի և սրբազան կաթողիկոսացն Հայոց Ներսիսի և Գրիգորիսի. Թուղթքն, զոր դրեցին առ միմեանս» ժողովածուն³ XII դ. երկրորդ կեսի հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունների և եկեղեցիների միության խնդրի պատմության կարևորագույն աղբյուրն է: Այն կազմել և խմբագրել է Ներսես Լամբրոնացին՝ իր եղբայր Հեթումի պատվերով⁴: Սակայն, ինչ-ինչ պատճառներով, որոնց մասին լռում է խմբագիրը, ժողովածուից պակասուս՝ են որոշ թղթեր: Թերևս այդ պակասը նկատի ունի Ն. Լամբրոնացին, երբ հավաքածուի հիշատակարանում եղբորը գրում է. «...ըստ փափագման քո... շարադրեցի համառօտաբար զՊատճառ նամակացն հանդերձ թղթովքն»⁵:

Դուրս մնացած ուղերձների ճշգրիտ քանակը մեզ հայտնի չէ. այդուհանդերձ՝ վկայություններ կան «Պատճառ խնդրոյ միաբանութեան...» ժողովածուի մեջ դրանցից երկուսի գոյություն ունեցած լինելու մասին:

¹ Նման հետազոտության նախնական փորձ տե՛ս Ա. Գ. Դ ո լ լ խ ա ն յ ա ն, «Գրառաջքները» հայ միջնադարյան մատենագրության մեջ («Արարեք», 1975, № 12, էջ 66—74):

² Կան Ներսես Լամբրոնացու և Գրիգոր Տղայի թղթերի մատենագիտությունները (Ն. Ա. Կ ի ն յ ա ն, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 213—220, 296—302, Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, աշխատասիրությամբ Ա. Շ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն ի, Երևան, 1972, էջ 47—53):

³ Այն մտել է Ներսես Շնորհալու նամակների «Թուղթ ընդհանրական» անունը կրող հավաքածու և ունեցել մի շարք հրատարակություններ, որոնցից լավագույնը 1871 թ. Երուսաղեմի տպագրությունն է: Ժողովածու մտած թղթերի մատենագիտությունը տե՛ս Հ. Ա ն ա ս յ ա ն, Հայկական մատենագիտություն, Երևան, 1976, հ. Բ, էջ 261—265:

⁴ Ն. Ա Կ ի ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 218:

⁵ Նույն տեղում:

Թղթերից մեկի վերջում առկա ներսես կամբրոնացու ծանոթագրությունը⁶ տեղեկացնում է, որ բյուզանդական Մանուել կայսրը (1143—1180) մեծ վշտով է ընդունել ներսես Շնորհալու (1166—1173) մահվան լուրը և հրամայել. «...ի թագաւորական քաղաքին եկեղեցիսն իշատակել զնա ընդ առաջին սուրբսն տօնախմբութեամբ»։ Այնուհետև ներսես կամբրոնացին ավելացնում է. «Գրեաց և թուղթ մխիթարութեան նոյն ինքն բարեպաշտ թագաւորն ի հարազատ որդի նորին սրբոյ աթոռոյն ի տէր Գրիգոր⁷. և առաքեաց արքայէս զնոյն իմաստուն այրն Իէռուխանէ⁸՝ զալ և տալ ողջոյն նորապսակ հայրապետին, որպէս զի՝ Սկսեալն, ասէ, ի նախնոյն և յերանելի հօրէն քո՝ ի ձեռն կատարեսցի։ Իսկ նորա եկեալ յարևելս, ի խռովութենէ ճանապարհացն արգելու, և ոչ կարաց հասանել ի հայրապետական աթոռն առ նորապսակ հայրապետն, այլ միայն զնամակն թագաւորական առաքեաց ի ձեռն հետիոտաց ոմանց ճարտարաց և հմտից ճանապարհին»⁹։

Ժողովածուից բացակայող հաշորդ թղթի մասին Գրիգոր Տղան տեղեկացնում է Մանուել կայսերն ուղղած իր առաջին նամակում. «...քանզի որպէս ծանուցաւ նախ քում բարեպաշտութեանդ յառաքեալ մեր գրոյն...»¹⁰, որից իմանում ենք, թե մինչ այս Գրիգոր Տղան մի այլ նամակ էլ է գրել Մանուելին։

Այս երկու թղթերը դեռ հայտնաբերված չեն։

1893 թ. Արշակ Տեր-Միքելյանը հրատարակել է մի թուղթ¹¹, որը, մեր համոզմամբ, հրապարակված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 2966 ձեռագրից¹² (էջ 40ա—47բ)։ Տպագրության 27-րդ էջի երրորդ տողատակից տեղեկանում ենք, որ հրատարակիչը նամակի վերնագիրը լրացնելու համար օգտագործել է ես մի գրչագիր՝ Մատենադարանի № 3062 մատյանը¹³ (էջ 149ա—153բ)։ Բացի վերոհիշյալ հավելումից, երկրորդ ձեռագիրն այլ էական տարբերություններ չունի և, հավանաբար, այս է պատճառը, որ Ա. Տեր-Միքելյանը չի կազմել ուղերձի համեմատական բնագիրը¹⁴։ Հարկ

6 Ն ե ռ ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Թուղթ ընդհանրական, Երուսղեմ, 1871, էջ 165—166։

7 Նկատի ունի Գրիգոր Գ Տղային (1173—1193)։

8 Նրա մասին տե՛ս Ն. Ա կ ի ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 251։

9 Թուղթ ընդհանրական, էջ 166։

10 Նույն տեղում։

11 «Արարատ», 1893, էջ 27—48։ Երախտավոր հայագետն իր վրա էր վերցրել XII—XIII դդ. թղթերի հրապարակման և ուսումնասիրման գործը։ Տե՛ս նրա՝ Die armenische Kirche in ihren Beziehungen zur Byzantinischen vom IV bis zum XIII Jahrhundert, Leipzig, 1892 աշխատանքաց եկեղեցին և բյուզանդեան ժողովոց պարագայք, Մոսկվա, 1892, «Կոստանդին Ա կաթողիկոսի մի թուղթն առ Հեթում թագաւորը» («Արարատ», 1892, էջ 844—1058), «Միքիլ դարբերի կաթողիկոսների ձգտումները եկեղեցական խաղաղութեան համար» («Արարատ», 1893, էջ 25—48, 129—145, 236—253, 319—350, 404—411), «Եկեղեցական աղմուկները ԺԳ դարի սկզբում» («Արարատ», 1893, էջ 412—418, 506—523), «Սսի և Ատանայի իշխանաժողովը» («Նումայ», 1901, դիրք Ա, էջ 290—316) աշխատությունները։

12 Գրված XVII դ., Կոստանդնուպոլսում, գրիչ՝ Ղուկաս։

13 Գրված 1765—1766 թթ., գրիչ՝ խաչատուր Կոստանդնուպոլսեցի։

14 Բերում ենք մեզ հետաքրքրող հուշարձանի սկիզբն ու վերջը՝ ըստ № 2966 ձեռագրի։ Ա տառով նշում ենք № 3062 գրչագիրը, Բ-ով՝ հրատարակությունը։

Խորագիր—Թագաւորին Հոռոմոց Մանուէլի (Բ—Մանուէլի). պատասխանի գրեալ Գրիգորի (Ա-ի Գրիգորի, Բ-ի Գրիգորէ) կաթողիկոսէ Հայոց (Ա—Հայոց որ ի ԿլանՏին՛ ալսինքն Հոռ-մէական, Բ—որ ի Կլայն Հոռմէական)։

Ակիզը—Քրիստոսի պսակեալ և առ ի նմանէ ղօրացեալ արքայից արքայ, ծիրանածնունդ

ենք համարում հայտնել, որ երկու ձեռագրերում էլ մեզ հետաքրքրող նամակին հետևում են Գրիգոր Տղայի՝ Գրիգոր Տուտեորգուն ուղղած երկու թուղթը¹⁵, ապա վերջինիս պատասխանը¹⁶:

Ե՛վ գրչագրերում, և՛ հրատարակության մեջ մեզ հետաքրքրող հուշարձանը վերջից թերատ է: Այդ է հավաստում նաև Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի՝ Մանուել կայսերն ուղղած նամակների վերջի բանաձևը, որը բացակայում է մեզ հետաքրքրող հուշարձանում¹⁷: Կարելի է հուսալ, որ կգտնվի այս ուղերձի ամբողջական ընդօրինակությունը:

Թղթի հեղինակի մասին Ա. Տեր-Միքելյանը գրում է. «Վերնագրի մեջ չկա թե Գրիգոր Գ-ինն է, սակայն ամբողջ բովանդակությունը հաստատապես ճշմարտում է»¹⁸: Ինչպես արդեն նկատվեց, ըստ երկու գրչագրերի վերնագրի՝ թուղթն ուղղված է Մանուել կայսերը, իսկ հեղինակը՝ Գրիգոր կաթողիկոսն է: Մեզ հետաքրքրող ուղերձը կարող էին գրել և Գրիգոր Գ Փոքր Վկայասերը (1113—1166), և Գրիգոր Դ Տզան (1173—1193), որոնց հայրապետության տարիները համընկնում են Մանուելի կառավարման ժամանակահատվածին:

Անցնենք խնդրո առարկա ուղերձում առկա այն տեղեկությունների քննությանը, որոնք կարող են օգնել թղթի ճշգրիտ թվագրմանը ու հեղինակը որոշելուն:

Նամակի սկզբում ողջունելով թագավորին, հեղինակը շարունակում է. «...պատիւս և գոհութիւնս ոչ սակաւս ամենատեառնն և խնամողին զձեզ մատուցաք. և մատուցուք. յաւետ և երկարածիդ աղօթիւք և պաղատանօք խնդրեսցուք ի Տեառնէ, և խնդրեմք յարաժամ առաջի աստուածընկալ սրբոցս. որոց սպասաւոր եմս հանդերձ միաբանական բազմութեամբս՝ որ ընդ մեզ են եպիսկոպոսօք և վարդապետօք և խաչակիր ճգնող միանձամբք տալ զձեզ պարագայծ ամօք և խաղաղական կենդանութեամբ յաղթութեամբ ճանդերձ մանուկապարզ և մանուկածնունդ ծիրանածնունդ սուրբ բարեփառ բազաւորաւ Ալեքսիոսի. և բովանդակ մեծապատիւ զարմիւք...»¹⁹:

Այս նույն բանաձևը, սովելի համառոտ տեքստով, հանդիպում է Գրիգոր Տղայի «...ձայնակցութեամբ ընդհանուր ժողովոյ Հայոց...» թղթում, որտեղ կարդում ենք. «...գոհութիւնս Ամենատեառն խնամոց մատուցաք, երկայն ժամանակաւ յերկարել ի նոյնդ խնդրեմք յԱստուծոյ, եւս գերազանց զօրութեամբ

Թագաւոր. կարող և բարձր միջոց Օգոստոս ինքնակալ (Բ—և ինքնակալ) Հոռոմոց գրաւորական պատուելի: Հրաման...:

Վերջ—...և մեօք հանդերձ արժանի լինել փառաւորել զամենասուրբ զերրորդութիւնն (ԱԲ—զերրորդութիւն) այժմ և... (Ա—այ... փխ այժմ և...):

15 «Արարատ», 1893, էջ 238—243, 245—253:

16 Նույն տեղում, էջ 321—350:

17 Բերում ենք դրանց մի քանի տարբերակները.

— «Ողջ լեր, Թագաւոր Օգոստէ, երկնաւոր Թագաւորին պահպանեալ զօրութեամբ» («Թուղթ ընդհանրական», էջ 120):

— «Ողջ լեր, օծեալդ Աստուծոյ, յաղթող եղեալ հակառակամարտիցն՝ զօրութեամբ ճշմարիտ օծելոյն Յիսուսի» (Նույն տեղում, էջ 161):

— «Ողջ լեր, յարքունական տերութեանդ պարագայց ամօք, կարող Օգոստոս և ինքնակալ բարձր աստուածասէր Թագաւոր» (Նույն տեղում, էջ 168):

— «Ողջ լեր աստուածասէր Թագաւոր» (Նույն տեղում, էջ 192):

18 «Արարատ», 1893, էջ 27: Ա. Տեր-Միքելյանը նույն միտքը կրկնել և զարգացրել է 26, 129—130 էջերում:

19 «Արարատ», 1893, էջ 28: Այս և հետագա ընդգծումները մերն են:

և փառք հանդերձ Մանուիլածին և մանուիլապարզեւ ծիրանածին արքայիս
հարազատ անդրանկաւ ձեռ Ալեքսիոսիւ և բովանդակ մեծապատիւ զարմիրս²⁰։

Նույն բանածեւի երկրորդ ձեւակերպումը, ի տարբերություն առաջինի,
ավելի հստակ է վկայում, որ ողջունը ուղղված է Մանուել Կոմնենոսի որդի
Ալեքս Բ-ին, Ինչպես հայտնի է, Ալեքսը ծնվել է 1169 թ.²¹։ Ուրեմն՝ այս
թուղթը չէր կարող դրել Գրիգոր Գ-ը (Փոքր Վկայասեր), որը մահացել է
1165 կամ 1166 թ. (հայագիտության մեջ ընդունվածը վերջինն է)։

Վերոբերյալ հատվածներում վկայվում է, որ Ալեքսը արքա է²²։ Գրիգոր
Տղան կաթողիկոս է օծվել 1173 թ.։ Հետևաբար՝ քննության առարկա նամակը
կարող էր գրվել 1173 թ. հետո, ոչ ավելի ուշ, քան 1180 թ., երբ մահացավ
Մանուել կայսրը։

Մանուելին ուղղված մի այլ հատվածում կարդում ենք. «...և աճուցանել
ի ձեզ բոստ պարարտութեան գովելի և օրհնեալ անդոյդ զբոյսս աստուածային
սերմանցն. ուստի հնձի որայն կենաց և անմահութեան. երեսնաւորն, վաթսնա-
վորն և հարիւրաւորն²³ առ ի լինել հաց կենդանական. կերակրիչ և հաստա-
տիչ, յողողողիչ մտաց և ջուր զովարար առ ի տածումն ծարաւեալ սրտից, որ և
աղբերացեալ առատաբուլիս ծաւալմամբ և առ մեզ ժամանեալ եհաս. առ տա-
րամերժեալս և առ հալածեալս ի սահմանս Եփրատայ և ի խաղացս անօրէն
ազգին Հագարու և ծննդոց աղախնագաւակ և մուրագնաց մանկանն»²⁴։

Հատվածում ալլաբանորեն խոսվում է Մանուել կայսեր ինչ-որ ռազմա-
կան արշավի մասին («...ի սահմանս Եփրատայ և ի խաղացս անօրէն ազգին
Հագարու...»)։ Այդպիսի արշավանք կազմակերպվել է 1175 թ. գարնանը և
շարունակվել մինչև 1176 թ. սեպտեմբերի 17-ը²⁵ ընդդեմ Խլիճ Արսլանի։ Այդ
արշավանքի մասին տեղեկացնում է «Պատճառ խնդրոյ միաբանութեան...»
ժողովածուի մի ծանոթությունը։ Բերելով Գրիգոր Տղայի՝ Մանուելին ուղղած
առաջին թղթի բնագիրը՝ Ն. Համբրոնացին գրում է. «Առեալ զայս դիր քա-
հանայն Կոստանդին²⁶ և ընդ նմա իշխանք ի տիրական աթոռոյն, եհաս առ
թագաւորն՝ յորժամ ել²⁷ յարեւելս ի պատերազմ ընդդեմ այլազգի սուլտանին
Իկոնիոյ. զոր ընթերցեալ բարեպաշտ թագաւորն՝ ուրախ եղև. և առաքեաց
զնա ի քաղաքն թագաւորական՝ մինչև ի դարձն իւր ի պատերազմէն Իսմայի-

20 «Թուղթ ընդհանրական», էջ 181։

21 Ըստ Շալանդոնի՝ սեպտեմբերի 10-ին (F. Chalandon, Les Comnène, t. II(1), 1921, p. 212), իսկ ըստ Վիրտի՝ սեպտեմբերի 14-ին (P. Wirth, Wann wurde Kaiser Alexius II Komnenos gehoren?, BZ. t. 49, 1956, S. 65—67)։ Երկրորդ տեղեկությունը քաղում ենք К. Юзбашян, Классовая борьба в Византии в 1180—1204 гг. и четвертый крестовый поход, Ереван, 1957, стр. 11, հմտ. նաև «История Византии», т. 2, М., 1967, стр. 326.

22 Շալանդոնը տեղեկացնում է (նշվ. աշխ., հ. II. (1), էջ 212), որ Ալեքսը գահակից է հայտարարվել 1171 թ. մարտի 4-ին (dès le 4 mars 1171, fut associé a l'empire)։

23 Մատթեոս, ԺԳ, 8։

24 «Արարատ», 1893, էջ 28—29։

25 «История Византии», т. 2, стр. 332.

26 Ազգությամբ հույն։ Գրիգոր Տղան նրան ուղարկում է Կոստանդնուպոլիս՝ օժտելով կայսերն ուղղված միջնորդագիր-ուղերձով, որով խնդրում էր Կոստանդնուպոլիսի օժիւ Հերապոլսի մետրոպոլիտ։ Հմտ. «Թուղթ ընդհանրական», էջ 166—168։ Հայտնի են Կոստանդնուպոլիսի և Ներսես Լամբրոնացու թարգմանությունները։ Այս մասին տե՛ս Ն. Ակիւնյան, նշվ. աշխ., էջ 253—254։

27 Հրատարակության տողատակն ունի այսպիսի էջ՝ տարբերությունը, որը մեզ ավելի հարազատ է թվում։

լական ազգին... Նւ եղեւ յամել թագաւորին ի պատերազմ զամ մի, և նորա մնալ ի քաղաքին: Իսկ ըստ մեղաց մեր ծանրացաւ ձեռն անօրինացն ի վերայ, և յաղթեցաւ բարեպաշտ թագաւորն յալլազգի սուլտանէն Խլիճասլանայ մերձ յիկոնիոն, ի տեղւոջն՝ որ կոչի Մելիտենի, յամսեանն սեպտեմբերի, և ի թուարեւոթեանն Հայոց ի վեց հարիւր քսան և հինգ»²⁸:

Քանի որ արժարժւող թղթում ոչ մի վկայութիւն չկա պատերազմի ավարտի մասին, ուրեմն այն գրվել է 1176 թ. սեպտեմբերից ոչ ուշ՝ այն օրերին, երբ կայսրն արեւելքում էր²⁹:

Այս նույն ժամանակ է գրվել նաև «Պատճառ խնդրոյ միաբանութեան...» ժողովածուի մեջ առկա Գրիգոր Տղայի առաջին թուղթը՝ հասցեագրված Մանուկին: Այն կարելի է թվագրել 1175-ով, որովհետև նամակում Գրիգոր Տղան ակնարկում է Մանուկի արշավանքը դիպի արեւելք (ա...ելեալ ի հանդէս ընդդէմ անօրինաց, և աղօթեմք տեսանել զյաղթութեան կատարումն»³⁰), բայց նույն նամակի՝ Ն. Լամբրոնացու գրած ծանոթագրութեան պարզվում է, թե այն Մանուկին հասցնող Կոստանդին քահանան ուղերձը հանձնելով արեւելքում գտնվող կայսերը, վերջինիս կողմից ուղարկվում է մայրաքաղաք և մեկ տարի, մինչև պատերազմի ավարտը, մնում այնտեղ³¹:

Կոստանդին քահանայի Կոստանդնուպոլիս տարածից առաջ մեզ հետաքրքրող ուղերձը գրվել չէր կարող, որովհետև Գրիգոր Տղան իր առաջին նամակում (Կոստանդինի ձեռքով Կոստանդնուպոլիս տարված) հաղորդում է. «Այլ զհաւատոյ բան ոչ ինչ կարօտ է երկրորդ անգամ լսել ի մէջ աստուածասէր թագաւորդ, զի գնոյն ինքն զերանելի հայրապետն մեր զսուրբն Ներսէս՝ կենդանի բանիւքն իւրովք ունիմք առաջնորդ առ Քրիստոս խոստովանութեանն ի մէջ մեր, որ զձեր թագաւորութիւնդ նուաճեաց ի հաւանութիւն աստուածիմաստ գիտութեամբքն՝ յոր առ մեզ ուղղափառութեանս»³²: Սա նշանակում է, որ մինչև այս չի գրվել «զհաւատոյ բան» (հավատո գիր), իսկ քննարկվող թուղթը հավատո նամակ է:

Ի մի բերենք ասվածը. թուղթը գրված է կամ 1175 թ. վերջին, կամ էլ, որն ավելի հավանական է թվում մեզ, 1176 թ.՝ մինչև սեպտեմբերի 17-ը:

Պահպանվել է, արդյոք, քննարկվող նամակի պատասխանը: Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ այն «Պատճառ խնդրոյ միաբանութեան...»-ում հրապարակված Մանուկ կայսեր առաջին նամակն է՝ ուղղված Գրիգոր Տղային³³, որն առ այսօր ավանդութեան ուժով դիտվել է որպէս Կոստանդինի կողմից 1175 թ. Կոստանդնուպոլիս տարված նամակի պատասխան³⁴: Այդ ապացուցող ի՞նչ փաստարկներ տւնենք:

Մանուկ կայսեր Գրիգոր Տղային ուղղված առաջին նամակում կան ուղղակի վկայութիւններ, որոնցից երևում է, թե Մանուկը պատասխանում է Հայոց կաթողիկոսի դավանաբանական թղթին³⁵:

²⁸ «Թուղթ ընդհանրական», էջ 168:

²⁹ Ըստ Շալանդոնի (նշվ. աշխ., հ. II (2), էջ 504), 1175—1176 թ. ձմեռը Մանուկն անցկացրել է կայսրութեան մայրաքաղաքում:

³⁰ «Թուղթ ընդհանրական», էջ 167:

³¹ Նույն տեղում, էջ 168:

³² Նույն տեղում:

³³ «Թուղթ ընդհանրական», էջ 169—175:

³⁴ Գրիգոր Տղա, էջ 49:

³⁵ Հղում ենք ուղերձում հանդիպող նման տեղեկութիւնների սկիզբն ու վերջը:

Ինչպիսի վերևում տեսանք, Կոստանդին քահանայի ձեռքով Մանուկին հանձնված թուղթը դավանարանական հարցեր չէր քննարկում, որովհետև. «...դժառաշույ Բան ոչ ինչ կարօտ է երկրորդ անգամ լսել ի մէջ... դի զնոյն ինքն դերանկի հայրապետն ուր զսուրբն Ներսէս՝ կենդանի բանիւքն իւրովք ունիւք առաջնորդ առ Քրիստոս խոստովանութեանն ի մէջ մեր...»։ Նշանակում է, որ Մանուկի մեզ հետաքրքրող թուղթը չի կարող լինել Կոստանդին քահանայի կողմից Կոստանդնուպոլիս տարված ուղերձի պատասխանը։

Մանուկի «առ Գրիգոր» Տղա առաջին թղթի և քննարկվող նամակի համեմատության առնված հատվածները ապացուցում են³⁶, որ Պատմառ խնդրոյ միաբանութեան... ժողովածուի մեջ հրատարակված Մանուկ կայսեր առաջին նամակը՝ ուղղված Գրիգոր Գ Տղային, «Արարատ»-ում հրատարակված ուղերձի պատասխանն է։

Մանուկի այն ուղերձը, որին պատասխան է հանդիսացել Գրիգոր Գ-ի վերևում քննված նամակը, դեռևս գիտությունը հայտնի չէ։ Այդ թղթի մասին միայն մի բանի ակնարկ կարելի է գտնել Գրիգոր Գ-ի պատասխան ուղերձում³⁷։ Կարևոր է ենթադրել, թե Մանուկը չի գոհացել Կոստանդին քահանայի Կոստանդնուպոլիս տարած թղթի այն մտքով, որ Գրիգորը (Տղա) Ն. Շնորհալու ասածներին համամիտ է։ Կայսրը նամակ է գրել և պարտադրել Գրիգոր Տղային դավանաբանական խնդիրների վերաբերյալ շարադրել իր տեսակետները։ Ելնելով վերևում ասվածից կարելի է եզրակացնել.

ա) «Ձառարեալ գիրս ձեր թագաւորութիւնս մեր ընթերցաւ... և խորհին այսպէս սգալ և թիւր ի ձեզ զայթակղութիւնս (սթուղթ ընդհանրական», էջ 169—170)։ Այս հատվածը պատասխանն է «Արարատ»-ում հրատարակված թղթի էջ 32—33 («Արդ ամենայն առաքելական... ի սրբոց հարցն աւանդելոց»), էջ 36 («Նւ փոխանակ սոցա դարս... որ ի սուրբ երրորդութիւն գի. զրէ այսպէս»), էջ 41 («Արդ՝ այսքան և այսպիսի վկայութիւնք... զնալովն աստուածայնոյն») և հատկապես էջ 43—48 («Արդ՝ զայս ամենայն... զերրորդութիւն այժմ և...») հատվածների և զրված է դրանց ազդեցության տակ։

բ) «Ընկալաւ և մանաւանդ թագաւորութիւնս մեր... և զանանցն և զանքսպառն ժառանգեսցես զիտստումն» («Թուղթ ընդհանրական», էջ 170)։ Այս հատվածի հետ համա. «Արարատ», 1893, էջ 43—48։

գ) «Իսկ վասն իշանելայն Միածնին ունիմք... ըստ յատկութեանցն և ի ներգործութիւնն մնային անփոխաբարար» («Թուղթ ընդհանրական», էջ 171—172), համա. «Արարատ», 1893, էջ 43—48։

դ) «...և զայնոսիկ որք համաձայնին... կարասցես առնուլ ի բարեպաշտութիւն» («Թուղթ ընդհանրական», էջ 173), համա. «Արարատ», էջ 43—48, 32—33, 36, 41։

ե) «Իսկ նամակ քո սրբութեանդ զոր դրեալ ես... քանզի ըստ բարեպաշտ մտածութեանն մի գտաք» («Թուղթ ընդհանրական», էջ 174), համա. «Արարատ», 1893, էջ 43—48։

36 Տե՛ս 35-րդ տողատակը։

37 Մանուկի այդ ուղերձի մասին տես հետևյալ հատվածները.

ա) «Հրաման ինքնակալութեանդ ձերոյ... առ երեւելիս և ընդդէմ աներևութից» («Արարատ», 1893, էջ 28)։

բ) «Ջոր (Իմա—Ջոր—Ա. Բ.) ընկալեալ ի ձեռս հանդերձ գոհութեամբ... զանուշահոտ ծաղիկն...» (նույն տեղում, էջ 29)։

գ) «Այլ որպէս և դրեցէքն, ով աստուածասէր... առանց հեղման արեան շիւնի թողութիւն մեղաց» (նույն տեղում, էջ 47)։

դ) «Նոյնպէս և դուք պարտիք... և հակամիտ, անտի իսկ է...» (նույն տեղում, էջ 47—48)։

Այս վկայություններից կարելի է ենթադրել, որ Մանուկի նամակը շոշափել է դավանաբանական խնդիրներ։

1) «Պատճառ խնդրոյ միաբանութեան...» ժողովածու չեն մտել Մանուել կայսօր թագավորութեան ժամանակաշրջանի մի շարք վավերագրեր, որոնք վերաբերում են եկեղեցիների միութեան խնդրին: Մեղ հայտնի այդպիսի փաստաթղթերի թիվը չորսն է: Դրանցից երեքը գիտութեան հայտնի է միայն թղթերում առկա վկայություններից: Այդ թղթերից երկուսը Գրիգոր Դ Տղայի գրին են պատկանել, երկուսը՝ Մանուել կայսեր:

2) «Պատճառ խնդրոյ միաբանութեան...»-ից բացակայող թղթերից մեկը 1893 թ. Ա. Տեր-Միքելյանը հրատարակել է Գրիգոր Գ-ի (Փոքր Վկայսեր) անունով: Վերևում, այդ թղթից բերված մի քանի վկայություններով, ապացուցվում է, որ գրա հեղինակը Գրիգոր Դ Տղան է:

3) 1893 թ. «Արարա»-ում հրատարակված թղթի պաշասխանը «Պատճառ խնդրոյ միաբանութեան...» ժողովածու մտած Մանուել կայսեր առաջին թուղթն է ուղղված Գրիգոր Դ-ին:

ОБ ОДНОМ ПОСЛАНИИ, ПРИПИСЫВАЕМОМ ГРИГОРИЮ III МАРТИРИОСИЛУ МЛАДШЕМУ

АЗАТ БОЗОЯН

Р е з ю м е

Сборник посланий императора Манунла и армянских католиков—один из важнейших первоисточников по истории дипломатии и армяно-византийских историко-культурных отношений. По неизвестным ныне причинам некоторые послания того же периода в сборнике не представлены. Арменовед А. Тер-Микелян в конце прошлого века выявил одно такое послание, но не смог правильно определить его автора. Критическое изучение самого послания и дополнительных материалов позволило установить личность автора. Им был Григорий IV. Тем самым стала возможной точная датировка текста послания—конец 1175 и начало 1176 гг.